ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

173
(2653)

1 դեկտեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 145

«Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը որոշում է կայացրել, որ կառավարման մոդելի փոփոխություն չի արվելու, նախագահական կամ կիսանախագահական անցում չի լինելու, պետական կառավարումը մնալու է խորհրդարանական»,- երեկ հայտնել է խորհրդի անդամ, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ համակարգող Դանիել Իոաննիսյանը: Ընդ որում՝ հանձնաժողովում ոչ բոլորն են համակարծիք եղել համակարգ չփոխելուն: 2019 թվականի մարտին նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն էր ասել, թե կառավարման նախագահական համակարգին վերադառնալու անհրաժեշտություն չկա: Կառավարման համակարգի վերաբերյալ վարչապետի մոտեցումները լուրջ էվոլյուցիա են ապրել եւ փոփոխությունների են ենթարկվել: Փաստացի Նիկոլ Փաշինյանը դեմ էր սուպերվարչապետական համակարգին, քանի դեռ ինքը չէր վարչապետը:. Վարչապետ դառնալուց հետո Փաշինյանը հայտարարեց, որ պետական կառավարման համակարգում պետք է բալանսավորում տեղի ունենա, որը, սակայն, մեկ օրում չի լինելու. «Երբ մենք խորհրդարանական կառավարմամբ համակարգ ենք ստեղծել, բալանսավորում եղել է: Այսօրվա մեր Սահմանադրությամբ ՀՀ նախագահն ունի արարողակարգային գործառույթներ, եւ բալանսավորումը պետք է տեղի ունենա ոչ թե նախագահի ու վարչապետի միջեւ, այլ կառավարության եւ Ազգային ժողովի միջեւ: Սա է խորհրդարանական համակարգի տրամաբանությունը»: Այնուհետեւ՝ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ, Փաշինյանը հայտարարեց, որ եթե ժողովուրդը ցանկանա, ապա պետական կառավարման կարգը կփոխվի: Այժմ ժողովրդի ցանկությանը Փաշինյանը չի ցանկանում ականջալուր լինել եւ հայտարարում է, որ, իր կարծիքով, նման անհրաժեշտություն չկա: Հիմա էլ արդեն իր խոսքերն ամրագրվում են փոփոխություններով, այսինքն՝ նա կրկին մանիպուլացրել է, եւ հայտարարություններն իրար չեն համապատասխանում:

Նոյեմբերի 23-ին, երբ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը Հայաստանում էր, Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը հանդիպել է նրան. այս մասին հայտնում են «Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները: Հանդիպումը կայացել է «Դվին» հյուրանոցում: Սա նշանակում է, որ Ռուսաստանի Դաշնությունը՝ Վլադիմիր Պուտինի մակարդակով, Արայիկ Հարությունյանին է ընկալում որպես Արցախի առաջնորդ եւ նրան վստահում, թեեւ Արցախն ունի նոր պետնախարար՝ի դեմս Ռուբեն Վարդանյանի: Հանդիպումը, մեր տեղեկություններով, կայացել է Վլադիմիր Պուտին-Արայիկ Հարությունյան ձեւաչափով: «Ժողովուրդ» օրաթերթն իր այս տեղեկությունը ճշտելու եւ հավելյալ մանրամասներ պարզելու համար դիմեց Արցախի նախագահի նստավայր, որտեղից կտրուկ հերքեցին հանդիպման լուրը: «Արցախի նախագահն այդ օրերին եղել է Արցախում, ձեր լուրը իրականությանը չի համապատասխանում, նման հանդիպում չի եղել»,- ասացին Արցախի Հանրապետության նախագահի նստավայրից:

Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը հաջորդ տարվանից կստանա ամսական 665.600 ՀՀ դրամի չափով հավելավճար, իսկ խորհրդի անդամը՝499.200 ՀՀ դրամ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ արդարադատության նախարարությունն առաջարկում է փոփոխություններ կատարել «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում, որի արդյունքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահի եւ 9 անդամի մասով հավելումների ընդհանուր գումարը կազմելու է 61.900.800 ՀՀ դրամ (53.913.600+7.987.200) մեկ տարվա կտրվածքով: Նախագիծը կքննարկվի այսօր կառավարության նիստում: Նկատենք՝Կարեն Անդրեասյանը ԲԴԽ նախագահ է դարձել այս տարվա հոկտեմբերի 7-ին, այսինքն՝նրան հավելավճար տրամադրելու մասին նախագիծը բերվում է իր նշանակումից դեռ երկու ամիս չանցած, եւ ավելին՝համարվում անհետաձգելի: Հիմնավորման մեջ նշվում է, թե նախագծի նպատակը նույն իրավունքներ սահմանելն է, ինչ Վճռաբեկ դատարանի դատավորների դեպքում, ինչը օրենքի պահանջ է, սակայն նկատենք, որ Արդարադատության նախարարությունը այդ մասին հիշեց միայն հիմա, երբ ԲԴԽ նախագահն արդեն նախկին նախարար, գործող ԺՊ-ի ընկեր Կարեն Անդրեասյանն է, իսկ նախկին փոխնախարար Երանուհի Թումանյանցն էլ՝ԲԴԽ անդամ: Ստացվում է՝նախկին նախարարի ղեկավարած կառույցը նոր նախագիծ է բերել՝նախկին ղեկավարին ամսական 665 հազար դրամ հավելավճար տրամադրելու մասին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը վարույթներ է հարուցել Ազգային ժողովի ՔՊ-ական, ինչպես նաեւ «Հայաստան» խմբակցության մի քանի պատգամավորների նկատմամբ՝ «անհամատեղելիության պահանջի առերեւույթ խախտման» հիմքով: Տեղեկացանք, որ պատգամավորներն արդեն ստացել են հանձնաժողովի ծանուցումները, որ իրենց դեմ վարույթ կա: Հայաստանի Հանրապետությունում պատգամավորի մանդատի հետ անհամատեղելիության պահանջը, այդ թվում՝ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ: Ստացվում է, որ հանձնաժողովը պատգամավորների գործունեության մասով խախտում է գտել (նրանք նաեւ բիզնես գործունեությամբ են զբաղվում), ինչը անհամատեղելի է: Իսկ ովքե՞ր են այն պատգամավորները, որոնց նկատմամբ հանձնաժողովը վարույթ է հարուցել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝վարույթ է հարուցվել ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Նազարյանի, ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի եւ եւս մեկ ՔՊ-ական պատգամավորի նկատմամբ, որի վարույթը դեռեւս ընթացքի մեջ է, եւ առաջիկայում կներկայացնենք, թե ով է նա: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Գեղամ Նազարյանը հաստատեց, որ ծանուցում ստացել է հանձնաժողովի կողմից՝իր նկատմամբ հարուցված վարույթի մասով, եւ նշեց, որ դա թյուրիմացություն է եղել. ինքը կգնա վարույթի մասով նշանակված նիստին եւ կպարզաբանի ամեն ինչ: Խաչատուր Սուքիասյանի մամուլի քարտուղար Աննա Մկրտչյանն էլ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց, որ ծանուցումը ստացել են, եւ տեղի ունեցածը իրենց համար թյուրիմացության հետեւանք է, ինչով այս պահին զբաղվում են իրավաբանները: Ի դեպ, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 107 պատգամավորի հայտարարագրերը ուսումնասիրվում են, եւ չի բացառվում, որ ցանկը այսքանով չավարտվի, այլ պատգամավորների մասով եւս խախտումներ հայտնաբերվեն: Իսկ ի՞նչ է սպասվում վարույթից հետո. հնարավորություն է ստեղծվում, որ պատգամավորը ներկայացնի իր պարզաբանումը, որից հետո հանձնաժողովը եզրակացություն է կազմում ու հաստատում, որ իսկապես խախտել է համատեղելիության օրենսդրական պահանջը, սահմանադրական պահանջը. դա կնշանակի, որ առնվազն պետք է զրկվի մանդատից, իսկ առավելագույն պարագայում կարող է հարուցվել նաեւ քրեական գործ:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ

ԴԱՇԻՆՔԻ ՑԱՆԿԸ ԵՐԿԱՐ Է

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը, որ վերջերս է մանդատ ստացել, համաձայն չէ հնչող այն տեսակետների հետ, թե խմբակցության պատգամավորների՝ մանդատը վայր դնելը նշանակում է, թե իրենց խմբակցությունը կազմաքանդվում է:

«Խնդիրն այն կլիներ, որ մանդատը չդնեին ու դուրս գային ֆրակցիայից»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է նա:

-Պարոն Դանիելյան, թեեւ Դուք «Հայաստան» խմբակցության՝ բոլորովին վերջերս մանդատ ստացած պատգամավորներից եք, բայց խմբակցությունը, այսպես ասված, այդքան էլ լավ օրեր չի ապրում, քանի որ մի անգամից մի քանի պատգամավորներ վայր են դնում մանդատները: «Վերածնվող Հայաստան» կուսակցությունն էլ հայտարարել է, թե լքում է թե՛ խորհրդարանը, թե՛, հետեւաբար, նաեւ «Հայաստան» խմբակցությունը: Իշխանության՝ «Քաղաքացիական պայմանագրի» Ձեր գործընկերներն ասում են, թե «Հայաստան» խմբակցությունը փլուզվում է: Իրականում ի՞նչ է կատարվում խմբակցության ներսում:

-Բացարձակ համաձայն չեմ այն մտքի հետ, որ մեր ֆրակցիայում պառակտում կա. այդ կարծիքը չեմ կիսում: Ինքս էլ մանդատ եմ ստացել, որովհետեւ մինչեւ այս էլ մեկ ուրիշ պատգամավոր էր հրաժարվել մանդատից, բայց իմ ակտիվությամբ, աշխատանքով, կարծում եմ, առիթ չեմ տվել որեւէ մեկին՝ կարծելու, մտածելու համար, թե լավ չեմ աշխատում: Պատգամավորի պարտականությունները ստանձնելու օրվանից փորձում եմ լուծում տալ մեր քաղաքացիների հարցերին:

Ինչ վերաբերում է խմբակցության պառակտմանը, ապա, ըստ իս, խնդիր կլիներ այն ժամանակ, երբ պատգամավորները մանդատները պահեին. այդ ժամանակ գուցե ֆրակցիան կպառակտվեր ու մասերի բաժանվեր: Վստահեցնում եմ, որ նման բան չկա, պարզապես մեր՝ մանդատները վայր դնող ընկերներն իրենց գործունեությունն այլ կերպ են պատկերացնում, գուցե՝ Ազգային Ժողովից դուրս:

-Ձեր թիմակիցներից շատերն այն տեսակետին են, որ եթե փողոցի պայքարի՝ «Դիմադրություն» շարժման ժամանակ չեն հաջողել, ապա պետք է թողնել դաշտն ու գնալ:

-Ես համաձայն չեմ, թե փողոցում չենք հաջողել: Մեր հարեւան պետությունները՝ Թուրքիան, Ադրբեջանը, բազմիցս նշել են, որ Հայաստանում՝ փողոցում պայքարի դուրս եկած ընդդիմադիրները կարողացել են վիժեցնել ՀՀ իշխանությունների՝ Արցախի հարցում զիջումների գնալու պատրաստակամությունը: Այսինքն՝ այդ օրակարգը մենք՝ ընդդիմադիրներս, կարողացել ենք տապալել: Ի դեպ, այդ մասին խոսում ու խոստավանում են անգամ մեզ չսիրողները: Այո, այս պահին էլ մեր երկրի թիվ մեկ խնդիրն իշխանափոխության հարցն է, ինչը դեռեւս չենք կարողացել անել, բայց այն շարունակում է մեր օրակարգում մնալ, ու մենք ամեն րոպե, ամեն պահ շարունակելու ենք աշխատել, քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ:

Մեզ ձայն տված քաղաքացիներն ակնկալում ու պահանջում են, որ պետության համար առաջնահերթ, կարեւորագույն հարցերը հենց Ազգային ժողովի բարձր ամբիոնից բարձրաձայնվեն: Դա նրանց արդարացի իրավունքն է, ու եթե մենք այդ հարցերը չբարցրաձայնենք, ապա ժողովուրդը կասեի. «Բա էլ ինչի՞ համար ենք ձեզ վստահության քվե տվել, խորհրդարան գործուղել»: Կարճ ասած, այն համոզմանն եմ, որ, այո՛, պետք է գալ ու խոսել հենց այս հարթակից. չգալը պարզապես անթույլատրելի է:

Մեր այն ընկերները, որ կկարծեն, թե Ազգային ժողովից դուրս ավելի լավ, ավելի պրոդուկտիվ գործունեություն կարող են ծավալել, ապա իրենց իրավունքն է: Նրանց փոխարեն մեկ այլ գործընկեր կգա, ով պատրաստ կլինի գալ ու մեծ եռանդով ստանձնել պատգամավորի՝ անչափ պատասխանատու եւ պարտավորեցնող այս աշխատանքը, դրան զուգահեռ՝ նաեւ կպայքարի մեզ հետ: «Հայաստան» դաշինքի ցանկը երկար է, ու մանդատը դնողներին նորերը կփոխարինեն, եւ միասին կպայքարենք:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՑՈՒՅԱԿ ՈՒՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ պաշտպանության ԱԱ եւ ՆԳ հարցերով հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանն իշխանական խմբակցությունում նոր կարգավիճակ ունի. քա-ական պատգամավորների, նախարարների, ղեկավար անձնակազմի մասին նյութեր է հավաքում, հանդիպում խնդրում վարչապետ Նիկոլ Փաշինյանից ու գնում, բացասական լույսի ներքո ինտրիգներ է հյուսում թիմակիցների դեմ: Իհարկե, դա ներկայացնում է իբրեւ խմբակցության ներսում առկա իրավիճակ: «Այդ հանդիպումները պարբերական բնույթ ունեն, ու ամեն անգամ նա Փաշինյանին տեղեկացնում է, թե ով կարող է լինել թիմի «սեւ ագռավը»»,- պատմեց «Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրը՝ հավելելով, որ Քոչարյանը Փաշինյանի հետ հանդիպումներին իշխանականների կոնկրետ անուններ ներառող ցուցակներով է գնում: Մեզ փոխանցեցին նաեւ, որ հանձնաժողովի նախագահը՝ ի դեմս պատգամավորներ Արփի Դավոյանի ու Վահագն Ալեքսանյանի, իր ներկայացուցիչներն ունի ՔՊ վարչության ներսում ու երբեմն Փաշինյանի մոտ նաեւ նրանց միջոցով է ամրապնդում իր ասածները: Ինչո՞ւ է սեփական թիմում ինտրիգներ հյուսում. «Ժողովուրդ» օրաթերթը այս հարցի պատասխանը լսելու համար նաեւ Անդրանիկ Քոչարյանի մեկնաբանությունը փորձեց լսել՝ կապ հաստատելով նրա հետ: Պատգամավորի օգնականը մեզ տեղեկացրեց, որ Քոչարյան-Փաշինյան առանձին հանդիպում, որպես այդպիսին, տեղի չի ունենում: «Նրանք հանդիպում են կամ խմբակցության ընդհանուր նիստերի, կամ, օրինակ, ուժային կառույցների կողմից կազմակերպած միջոցառումների, կամ այլ ֆորմատի հանդիպումների ժամանակ: Առաձին հանդիպումներ, այն էլ՝ պարբերաբար, չեն ունենում»,- ասաց Քոչարյանի՝ Փայլակ անունով օգնականը: Թիմի ներսի «սեւերի» ցուցակին առնչվող հարցը, թերեւս, այդպես էլ մնաց անպատասխան:

ՀՖՖ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023-ին կլրանա Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի պաշտոնավարման ժամկետը, ու ֆեդերացիայի գործադիր կոմիտեն նոր նախագահ կընտրի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՖՖ-ում լուրջ փոփոխություններ տեղի չեն ունենա, քանի որ իշխանությունների «սրտի» Մելիքբեկյանը՝ ՀՖՖ ներկայիս նախագահը, ջանք ու եռանդ չի խնայում մերօրյա իշխանավորներին չնեղացնելու, հլու- հնազանդ ծառայելու համար: «Ժողովուրդ» օրաթերթի ունեցած տեղեկություններով՝ Մելքիբեկյան-Փաշինյան հարաբերություններն այնքան են սերտացել, որ Փաշինյանն անձամբ է զբաղվում ՀՖՖ-ով: «Եթե նախկինում այստեղ համակարգողը Սիմիդյանն էր, ու ֆեդերացիան իշխանության վերնախավի հետ նրա միջոցով էր կապ հաստատում, ապա այժմ Փաշինյանն այնպես է արել, որ Սիմիդյանը մի կողմ քաշվի, ու ինքն ուղիղ կապ ունենա: Սիմիդյանը, իր կամքից անկախ, մի կողմ է քաշվել»,- ասաց մեր թերթի լավատեղյակ աղբյուրը: Փաշինյանն անգամ Սիմիդյանի հարսանիքին ներկա չի եղել: Նիկոլ Փաշինյան-ՀՖՖ մտերմությունը, հիշեցնենք, նոր չէ. ֆեդերացիայի փոխնախագահը «Հայկական ժամանակ» օրաթերթում աշխատած Արմեն Նիկողոսյանն է: Ինչ վերաբերում է ֆեդերացիայի նախագահի ընտրություններին, ապա չենք կարծում, թե դրանք կտարբերվեն նախորդից, որ, Հայաստանի ազգային հավաքականի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանի մոր՝ ՀՖՖ գործկոմի նախկին անդամ Մարինա Թաշչյանի բնորոշմամբ, ոչ թե ընտրություն, այլ խայտառակ շոու էր:

ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄ

ՊՎԾ-ՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՎԵՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրամանով՝ փոփոխություններ են կատարվելու Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության կառուցվածքում:

Նախատեսվում է ստեղծել նոր տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին: Բացի այդ, ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող ռիսկերի գնահատման, վերլուծության եւ վերահսկողության վարչությունից առանձնացման ձեւով կստեղծվի ստուգումների իրականացման ոլորտի վերահսկողության վարչություն հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, իսկ ռիսկերի գնահատման, վերլուծության եւ վերահսկողության վարչությունը կանվանափոխվի ռիսկերի գնահատման եւ վերլուծության վարչություն:

Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող կարգապահական եւ ներքին հսկողության բաժինը կանվանափոխվի ներքին անվտանգության եւ հսկողության բաժնի:

Այսպիսով, ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) տնտեսական ոլորտի վերահսկողության վարչություն,
2) տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչություն,
3) սոցիալական ոլորտի վերահսկողության վարչություն,
4) պետահիրավական ոլորտի վերահսկողության վարչություն,
5) գնումների գործընթացների վերահսկողության վարչություն,
6) ռիսկերի գնահատման եւ վերլուծության վարչություն,
7) դիմումների եւ քաղաքացիների ընդունելության բաժին,
8) ներքին անվտանգության եւ հսկողության բաժին,
9) ներքին աուդիտի բաժին,
10) իրավական ապահովման եւ օրինականության վերահսկողության վարչություն,
11) ստուգումների իրականացման ոլորտի վերահսկողության վարչություն:

Ծառայությանն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) գործերի կառավարման եւ գնումների կազմակերպման բաժին,
2) հաշվապահական հաշվառման բաժին,
3) անձնակազմի կառավարման բաժին,
4) ընդհանուր բաժին,
5) առաջին բաժին,
6) տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ

Այս շաբաթվա վերջին օրերին Հայաստանի դատական համակարգի ներկայացուցիչները էլի կհավաքվեն Դիլիջանում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը հանդիպումների շարք է սկսել դատավորների հետ՝ քննարկելու համակարգում առկա խնդիրները: Տեղեկացանք, որ նախորդ շաբաթ կայացած քննարկումներին քրեական պալատի մի շարք ըմբոստ դատավորներ ներկա չեն եղել: Չնայած դրան՝ Կարեն Անդրեասյանը հստակ օրակարգով է առաջնորդվել՝ հնարավորություն չտալով քրեական դատարանի դատավորներին իրենց իրական ասելիքները փոխանցել բարձրագույն խորհրդին: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս ուրբաթ օրվանից դարձյալ Դիլիջանում կհավաքվեն արդեն վարչական, քաղաքացիական ու սնանկության գործերով դատարանների դատավորները: Բավականին թեժ քննարկում է սպասվում նաեւ այս պալատի ներկայացուցիչների հետ, քանի որ դատավորները աշխատում են գերծանրաբեռնված ռեժիմով: Վերջերս ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի հրավիրած աշխատանքային քննարկման ժամանակ հրավիրյալ 11 դատավորները մի քանի ժամ շարունակ ներկայացրեցին համակարգի խնդիրները՝ դժգոհելով, որ շատ դեպքերում դատավորները ոչ թե արդարադատություն են իրականացնում, այլ գործավարություն: Դժվար է ասել՝ Կարեն Անդրեասյանը կլսի արդյոք դատավորների բոլոր խոսքերը՝ համակարգի խնդիրների վերաբերյալ, թե էլի կհրաժարվի նախապես իր կողմից գրված օրակարգային հարցերից դուրս խնդիրների բարձրաձայնումից,այլ կերպ ասած՝ Անդրեասյանը հրավիրում է դատավորներին՝ լսելու, սակայն չի լսում:

ՆՈՐ ՊԱՇՏՈՆ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արուսյակ Մանավազյանը նշանակվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության աշխատակազմի ղեկավար: Առաջին հայացքից ոչ արտասովոր այս տեղեկությունն այնքանով է հետաքրքիր, որ այն հաստատում է «Ժողովուրդ» օրաթերթի՝ օրեր առաջ հրապարակած տեղեկությունը:

Օրաթերթը, մասնավորապես, գրել էր. «Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում դիրքային փոփոխություններ են տեղի ունենում: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերանայում է կուսակցության ներսում իր սիրելիների ու հավատարիմների ցանկը»: Եվ այժմ Մանավազյանի՝կուսակցությունում պաշտոնի նշանակելն ու հավելյալ լիազորություններ տրամադրելը վերոնշյալի ապացույցն է: Մանավազյանի ու Փաշինյանի ընտանիքի մտերմությունը տարիների պատմություն ունի:

Պատգամավորը, նշենք, 2008-2019-ին «Հայկական ժամանակ» օրաթերթը տպագրող «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի հաշվապահն է եղել, 2019-2021-ին՝ նույն ՍՊԸ-ի տնօրենը, հետեւաբար «հին ընկերներին» կամ յուրայիններին ավելի մեծ լիազորություններ տալը ոչ այլ ինչ է, քան սեփական թիմում սիրելիների ցանկի վերանայում:

ՆԱԽԱԳԻԾ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԳՈՐԾԱՐՔԸ ՔՊ-Ի ՀԵՏ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Վիլեն Գաբրիելյանը, Անդրանիկ Քոչարյանը, Արմեն Խաչատրյանն ու Քրիստինե Վարդանյանը հանդես են եկել «Ռազմական գործունեության մասին» անվամբ օրենքի նախագծով, որը ենթադրում է փոփոխություններ նաեւ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում:

Այս օրենքի նախագծով հստակեցվելու է, թե որ հասարակական միավորումները կարող են զբաղվել ռազմական գործունեությամբ, հիմնական նպատակները, սկզբունքները, ռազմամարզական կազմակերպությունների եւ ռազմամարզական կազմակերպությունների միության ստեղծման, գործունեության հիմնական ուղղությունների, դրանց կառավարման եւ ղեկավարման մարմինների իրավասությունների եւ լիազորությունների իրականացման, Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա եւ միջազգային մարմինների եւ կազմակերպությունների հետ դրանց փոխգործակցության եւ փոխհամագործակցության հետ կապված հարցերը: Հիմնավորման մեջ նշվում է, որ, 2014 թվականից սկսած, Հայաստանի Հանրապետությունում սկսել են ձեւավորվել հասարակական միավորումներ, որոնք միավորել են անձանց, որոնք հետաքրքրված են ձեռք բերել ինքնապաշտպանության, ֆիզիկական, կրակային եւ մարտավարական հմտություններ, այդ համատեքստում զբաղվել սպորտային մարզաձեւերով, ամրապնդել ֆիզիկական եւ հոգեբանական առողջությունը, բարձրացնել դիմակայունությունը, գոյատեւել արտակարգ պայմաններում, ցուցաբերել առաջին բուժօգնություն՝ ուսումնասիրելով նաեւ լեռնագնացություն եւ հոգեբանություն:

2016 թվականի ապրիլյան եւ 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում պաշտպանական գործողություններին ակտիվ մասնակցություն ունեցան այնպիսի կամավորներ, որոնք պատրաստություն էին անցել «Ողջ մնալու արվեստ», «Մեծն Տիգրան», «Ջարկ», «ՊՈԳԱ» եւ այլ հասարակական կազմակերպություններում եւ ցուցաբերեցին մարտավարական, հոգեբանական եւ կարգապահական բարձր որակներ: Նշվում է, թե մի կողմից նմանատիպ միավորումների անդամները փաստացի օրենքով սահմանված ունեն զենքի, կրակային, մարտավարական հմտություններ, պատրաստում են ռազմական, հոգեբանական, բժշկական գործի կամավորներ, որոնք, պատերազմական, արտակարգ եւ ճգնաժամային իրավիճակներում փոխգործակցելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության եւ այլ ուժային կառույցների հետ, փաստացի գործելով դրանց ենթակայության ներքո, ցույց են տալիս բարձր արդյունավետություն:

Մյուս կողմից՝21-րդ դարի անվտանգության միջավայրում, ինչպես ցույց տվեց 44-օրյա պատերազմը, միայն պետական կառույցները, որոնք պատասխանատու են պաշտպանության եւ անվտանգության համար, ի վիճակի չեն ամբողջապես պատրաստել, արձագանքել եւ վերակառուցել հասարակությունը ճգնաժամից դուրս հանելու եւ անվտանգությունը ապահովելու գործը, դիմակայելու հիբրիդային ռիսկերին, ուստի անհրաժեշտություն է առաջանում օգտագործել ողջ հասարակության ներուժը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՑԱԽԻՆ

Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը ԱՄՆ-ի օրենսդիրներին կոչ է անում քննարկվող տարեվերջյան ծախսերի փաթեթում ընդգրկել Արցախին 50 միլիոն դոլարի օգնության փաթեթը:

Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Բոբ Մենենդեսին հասցեագրված նամակում Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի նախագահ Ռաֆֆի Համբարյանը ամերիկահայ համայնքի եւ կոալիցիոն գործընկերների անունից շնորհակալություն է հայտնել նրան Կովկասում ԱՄՆ քաղաքականության վերաբերյալ վերջին լսումների համար:

Լսումների ընթացքում Բոբ Մենենդեսն անընդունելի էր անվանել Վաշինգտոնի ռազմական աջակցությունն Ադրբեջանին եւ արցախահայերին օգնություն չուղարկելը:

Սեպտեմբերին կոնգրեսական Փալոնը եւ Նեւադայի կոնգրեսական Դինա Տիտուսը Կոնգրեսի ավելի քան 45 անդամների աջակցությամբ դիմել էին ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենին եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) ադմինիստրատոր Սամանթա Փաուերին՝կոչ անելով «անհապաղ քայլեր ձեռնարկել՝ հատկացնելով զգալի ռեսուրսներ» վտանգի տակ գտնվող Արցախի հայ բնակչությանն աջակցելու համար:

ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐԸ ԶԳՈՒՇԱՑՎԵԼ ԵՆ

Ադրբեջանի ԶՈՒ-ն նոյեմբերի 29-ին շփման գծի արեւելյան եւ հյուսիս-արեւելյան ուղղությամբ խախտել է հրադադարը՝ կիրառելով հրաձգային զինատեսակներ: Հայկական կողմը կորուստներ չունի:

Հրադադարի խախտման մասին հաղորդվել է ՌԴ խաղաղապահ զորակազմի հրամանատարությանը:

Միեւնույն ժամանակ Ադրբեջանի ՊՆ տարածած հաղորդագրությունն այն մասին, թե, իբր, ՊԲ ստորաբաժանումները նոյեմբերի 29-ին՝ ժամը 18:10-ի սահմաններում, կրակ են բացել Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի օկուպացված տարածքներում տեղակայված ադրբեջանական դիրքերի ուղղությամբ, հերթական ապատեղեկատվությունն է:

Նոյեմբերի 30-ի ժամը 10:00-ի դրությամբ իրադրությունը շփման գծում հարաբերականորեն կայուն է:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ՝ ԼԵՀԱՍՏԱՆ

ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ Վահան Հունանյանը հայտնում է. «Նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 2-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն աշխատանքային այց կկատարի Լեհաստանի Լոձ քաղաք՝ մասնակցելու ԵԱՀԿ նախարարական 29-րդ համաժողովին:

Այցի շրջանակներում տեղի կունենան նաեւ մի շարք երկկողմ հանդիպումներ»:

Դեսպանը՝Հայաստանում

ՀՀ-ում Նիդերլանդների դեսպան Նիկո Սխերմերսը սոցցանցի իր էջում գրում է. «Ուրախ եմ վերադառնալ հայկական Ջերմուկ, այս անգամ՝ Նիդեռլանդների ԱԳՆ գործընկերոջ՝ Ջեթսկե Մարիա Կլայնի հետ՝տարածաշրջանում առկա իրավիճակի մասին տեղեկություններ ստանալու համար:

Հաճելի է հանդիպել այսքան դրական եւ խաղաղ մարդկանց նման դժվարին պայմաններում»:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ԴՈՒՍՏՐԸ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ոստիկանության նախկին պետ Վ.Գ.-ի դուստրը՝ Յ.Գ.-ն, միջոցներ տրամադրելով եւ խոչընդոտներ վերացնելով, օժանդակել է 2012-2018 թվականներին Կառավարությանն առընթեր ոստիկանության պետի տեղակալ-ոստիկանության զորքերի հրամանատարի պաշտոնը զբաղեցրած Լ.Ե.-ին, որը, պաշտոնեական դիրքն օգտագործելով, 2015-2018 թվականների ընթացքում իրեն վստահված առանձնապես խոշոր չափերով գույք է վատնման եղանակով հափշտակել:

2011-2018 թվականներին ոստիկանության պետի պաշտոնը զբաղեցրած Վ.Գ.-ն, 2015 թվականի մարտի 7-ի թիվ 490-Ա հրամանով, իր դստերը՝ Յ.Գ.-ին, նշանակել է ոստիկանության զորքերի շտաբի օպերատիվ բաժնի ավագ սպայի պաշտոնին: Այնուհետեւ, ոստիկանության զորքերի հրամանատար Լ.Ե.-ի՝ 2018 թվականի մարտի 16-ի 225-Ա հրամանով Յ.Գ.-ն նշանակվել է ոստիկանության զորքերի անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժանմունքի պետի պաշտոնին, եւ Վ.Գ.-ի՝ 2018 թվականի մարտի 16-ի 23-Ա հրամանով՝ Յ.Գ.-ին շնորհվել է ոստիկանության փոխգնդապետի կոչում, որից երեք օր անց, ոստիկանության զորքերի հրամանատար Լ.Ե.-ի՝ 2018 թվականի մարտի 19-ի 248-Ա հրամանով, Յ.Գ.-ն կրկին նշանակվել է ոստիկանության զորքերի շտաբի օպերատիվ բաժնի ավագ սպայի պաշտոնին, իսկ ոստիկանության պետի՝ 2018 թվականի մայիսի 10-ի 1388-Ա հրամանով, Յ.Գ.-ի կողմից ներկայացված զեկուցագրի հիման վրա՝ վերջինս ազատվել է ոստիկանությունում ծառայությունից:

Նշված պաշտոնին նշանակվելուց հետո՝ մինչեւ պաշտոնավարման դադարեցումը, Յ.Գ.-ն առհասարակ ծառայության չի ներկայացել, ծառայողական պարտականությունները չի կատարել:

Լ.Ե.-ն, քաջատեղյակ լինելով Յ.Գ.-ի կողմից ավելի քան երեք տարի՝ 2015 թվականի մարտի 7-ից մինչեւ 2018 թվականի մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու, սահմանված կարգով ծառայության չներկայանալու մասին, ոչ միայն չի ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ, այլեւ իրեն վստահված առանձնապես խոշոր չափերով ուրիշի գույքը վատնման եղանակով հափշտակելու միասնական դիտավորությամբ, պաշտոնական դիրքի օգտագործմամբ, նշված ժամանակահատվածում յուրաքանչյուր ամիս իր ստորագրությամբ հաստատել է ոստիկանության զորքերի ամսական ֆինանսավորման հայտերը եւ Ֆինանսների նախարարություն ուղարկված վճարման հանձնարարագրերը, որոնցում ներառված են եղել նաեւ անհարգելի պատճառներով ծառայության չներկայացած եւ ծառայողական պարտականությունները չկատարած Յ.Գ.-ի տվյալները: Վերը նշված ժամանակահատվածում Յ.Գ.-ին, որպես աշխատավարձ, պարգեւատրումներ, արձակուրդային գումարներ, փաստացի վճարվել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 8 մլն 838 հազար դրամ, վերջինս էլ աշխատանքի չհաճախելու եւ ծառայողական պարտականությունները փաստացի չկատարելու պայմաններում ստացել եւ կանխիկացրել է իրեն որպես աշխատավարձ, պարգեւատրումներ, արձակուրդային վճարներ տրամադրված գումարները:

Այսպիսով, Յ.Գ.-ն պաշտոնավարման ընթացքում, միջոցներ տրամադրելով եւ խոչընդոտները վերացնելով, օժանդակել է Լ.Ե.-ին՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով, վատնման եղանակով պետական միջոցներից առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 8 մլն 838 հազար դրամ հափշտակություն կատարելուն:

Վերը նշված հանցանքը կատարելու համար 2022 թվականի նոյեմբերի 30-ին հսկող դատախազի կողմից որոշում է կայացվել Յ.Գ.-ի նկատմամբ արարքի կատարման պահին գործող Քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին. մեղադրանք ներկայացնելու եւ խափանման միջոց ընտրելու համար այն ուղարկվել է Հակակոռուպցիոն կոմիտե:

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿՈՒ ԾՆՆԴԿԱՆԻ ՄԱՀ

Մեկ շաբաթվա մեջ՝ երկու ծննդկանի մահ: Մահացածների հարազատները դիմել են իրավապահներին եւ հայտնել, որ դեպքը տեղի է ունեցել բժիշկների պատճառով:

Նոյեմբերի 28-ին «Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության եւ գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ-ում (Հանրապետական ծննդատուն) 21-ամյա ծննդկան է մահացել: 21-ամյա Ծ. Ն.-ն նոյեմբերի 25-ին ընդունվել է Հանրապետական ծննդատուն, որտեղ ծննդաբերությունից հետո շուրջ երկու օր մնացել ու անընդհատ բողոքել է առողջական վիճակից՝ որովայնի, ոտքերի ցավից:

Դեպքի առթիվ քրեական վարույթ է նախաձեռնվել Քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ մասով, այսինքն՝ բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ: Քրեական վարույթի շրջանակներում նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Երեկ էլ հայտնի դարձավ, որ «Շենգավիթ» բժշկական կենտրոնում 33-ամյա ծննդկան է մահացել, եւ դեպքը տեղի է ունեցել նոյեմբերի 21-ին:

Մահացածի հարազատները եւս պնդում են, որ կատարվածի մեղավորները բժիշկներն են: Ու մինչ ցավալի դեպքերով նշանակվել են փորձաքննություններ, եւ քրեական վարույթ է նախաձեռնվել, հարազատներն այս օրերին հարցաքննվում են եւ իրավապահներին պնդում են, որ բոլոր մեղավորներին պետք է պատժել:

Կպատժվեն մեղավորները, թե ոչ՝ կհետեւենք քննության ընթացքին, սակայն իրավիճակի մասով ArmLur.am-ը զրուցեց նաեւ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի հետ՝ հասկանալու համար, թե նա՝ որպես նախարար, ինչ է արել այս ուղղությամբ, եւ արդյոք դեպքերը չեն անհանգստացնում իրեն:

ԻՆՔՆԱՍՊԱՆ Է ԵՂԵԼ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Քանաքեռ-Զեյթունում վարձով բնակվող տղամարդը՝ Ռ. Ավետիսյանը, ինքնասպան է եղել:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նա իր տանը խոհանոցի գազի խողովակից սավանով կախվել է:

Թե ինչն է եղել այդ քայլի պատճառը, դեռեւս հայտնի չէ. անգամ տղամարդու մտերիմներն են զարմացած:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՆԻՍՏԸ ԿՐԿԻՆ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի եւ մյուս պաշտոնատար անձանց մասով նիստը կրկին չի կայացել, քանի որ Ստեփան Գալստյանի վիճակը շարունակում է մնալ վատ: Գրել էինք, որ Գլխավոր շտաբի պետի տեղակալ Ստեփան Գալստյանի վիճակը Երեւան Կենտրոն քրեակատարողական հիմնարկում կամ բոլորին հայտնի «ԿԳԲ-ի պադվալում» վատացել է, եւ նրան տեղափոխել են «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Նա այնքան վատ վիճակում է եղել, որ անգամ ի վիճակի չի եղել երեկ գնալ Հակակոռուպցիոն դատարան եւ մասնակցել նիստի:

Հիշեցնենք, որ Գալստյանը կալանավորվել է ՀՀ ԶՈՒ-երի կարիքների համար ռազմամթերքի մատակարարման գործընթացում չարաշահումներ եւ առանձնապես խոշոր չափերով հափշտակություններ կատարելու դեպքերի առթիվ քննվող քրեական գործով: Նա մեղադրվում է նյութական ծանր հետեւանքներ առաջացնող պաշտոնեական դիրքի չարաշահման եւ պաշտոնեական կեղծիք կատարելու համար:

Հիշեցնենք նաեւ, որ այս գործով կալանքի տակ են ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, գլխավոր շտաբի պետի տեղակալ Ստեփան Գալստյանը, ռազմական ավիացիայի նախկին պետ Ավետիք Մուրադյանը, իսկ, ահա, զենքի մատակարար Դավիթ Գալստյանը՝ Պատրոն Դավիթը, ազատության մեջ է: Հավելենք, որ Ստեփան Գալստյանն իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱԽԱՁԵՌՆՎԵԼ Է ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 15-րդ կետերով նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Ադրբեջանի զինված ուժերի կողմից մարտական դիրքում հերթապահության ընդգրկված զինծառայողին հրազենային վիրավորում պատճառելու դեպքի առթիվ:

Նախնական տվյալներով՝ 2022թ. նոյեմբերի 29-ին՝ ժամը 17:50-ի սահմաններում, Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողները, ծառայողական պարտքի կատարման հետ կապված, ռասայական, ազգային, էթնիկ ծագումով, կրոնով, ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով, ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ կրակոց են արձակել արեւելյան ուղղությամբ տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տեղամասում գտնվող մարտական դիրքի ուղղությամբ: Դրա հետեւանքով մարտական հերթապահության ընդգրկված զինծառայող Ա.Զ.-ն ստացել է հրազենային գնդակային կույր վիրավորում: Կատարվում է նախաքննություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 29-ից 30-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 57 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ԻՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ ՆԻՍՏՈՒՄ

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը նոյեմբերի 29-ին վարչության նիստ էր անում, ինչի ժամանակ, ըստ կուսակցության տարածած հաղորդագրության, ԱԺ համանուն խմբակցության պատգամավորներ Վահագն Ալեքսանյանը՝ զարգացման եւ կապերի, իսկ Գեւորգ Պապոյանը՝ տարածքային կազմակերպությունների համակարգման գծով տեղակալներ են նշանակվել: Նման հաղորդագրությամբ ՔՊ-ն փորձել է ցույց տալ, որ ամեն բան կարգին է, ու իրենք միմիայն ներկուսակցական հարցեր են քննարկել: Իրականում, սակայն, վարչության նիստի ժամանակ Նիկոլ Փաշինյանը կուսակիցների մոտ անկեղծացել է, որ իրենց վիճակն անչափ վատ է: ArmLur.am-ի տեղեկություններով՝ վարչապետն ասել է նաեւ, որ պատերազմի սպառնալիքը կախված է մեր երկրի գլխին, ու որ դաշնակից, այնուամենայիվ, չունենք: Հավելել է նաեւ, որ, այսպես ասած, անտեր վիճակում ենք, քանի որ դաշնակիցները մեզ չեն պահում:

ԳԵՐՇՔԵՂ ԶԱՐԴԱՐԱՆՔ

Այս օրերին Երեւանը տոնական եռուզեռի մեջ է. տոնական զարդարանք ստանալու համար փողոցներ են փակվում, Ամանորի զարդեր ու լույսեր կախվում եւ այլն, եւ այլն: Տպավորություն է, թե մեր երկրում էլ ոչ մի ուրիշ դարդ ու ցավ չկա, ու պատերազմների պատճառով անդադար կորուստներ ունեցող երկրին հենց միայն գերշքեղ Նոր Տարին է պակասում: Ըստ տարբեր հրապարակումների՝ Երեւանի քաղաքապետարանն Ամանորի զարդարանքների համար արդեն իսկ մոտ 650 հազար ամերիկյան դոլար է ծախսել: Ի դեպ, քաղաքապետարանը դա արել է մեկ անձից գնման սկզբունքով: Եւ սա՝ այն ֆոնին, որ ոչ միայն 2022-ի սեպտեմբերի 13-ի մեկօրյա, այլ նաեւ 2020-ի 44-օրյա պատերազմից առ այսօր դեռ անթաղ մարմիններ ունենք: Հայաստանի տարբեր դիահերձարաններում դեռ չնույնականացված մարմիններ ու մասունքներ կան, հայ գերիները Բաքվի բանտերում շարունակվում են կտտանքների ենթարկվել, մի քանի տասնյակի հասնող անհետ կորածներ կան, իսկ մայրաքաղաքը պատրաստվում է մեծ շուքով Նոր Տարի նշել: Ինչ խոսք, սիրուն չէ:

1 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ՝ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, թե այս տարվա նոյեմբերի երեքից չորսը ՀՀ-ում անցկացված հայ-ղրղզական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստի անցկացման համար որքան գումար է ծախսվել: Մենք տեղեկացանք, որ ծախսերը եղել են 1.160.130 (մեկ միլիոն հարյուր վաթսուն հազար հարյուր երեսուն) դրամի սահմաններում: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրամանով այն կատարվել է Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պատվիրակությունների ընդունելության համար նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ներկայացրած հաշվետվության:

ԱՐՁԱԳԱՆՔ

«ՎԵՐԱԾՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ը ԿԱՇԿԱՆԴՎԱԾ ԷՐ

«Վերածնվող Հայաստան» կուսակցությունը երեկ հայտարարեց խորհրդարանում իր գործունեությունը դադարեցնելու մասին:

Կուսակցության անդամ պատգամավորներ Վահե Հակոբյանը, Ելենա Կիրակոսյանը եւ Հռիփսիմե Ստամբուլյանն էլ վայր դրեցին մանդատները:

Թեեւ շատ են խոսում, որ «Վերածնվող Հայաստանի» եւ «Հայաստան» դաշինքի մյուս անդամների մեջ լուրջ տարաձայնություններ են եղել, բայց ArmLur.am-ի հետ զրույցում կուսակցության անդամ Հռիփսիմե Ստամբուլյանը վստահեցրեց, որ միակ անհամաձայնությունը եղել է ԱԺ նիստերին մասնակցելչմասնակցելու հետ կապված. «Թիմակիցների հետ գաղափարների եւ մոտեցումների առումով որեւէ տարաձայնություն չի եղել, եղել է պարզապես մոտեցումների տարբերություն՝ խորհրդարան վերադառնալ-չվերադառնալու հետ կապված:

Մենք խորհրդարանից չէինք էլ հեռացել, խորհրդարանական գործունեությամբ շարունակել ենք զբաղվել, բայց ԱԺ նիստերին մասնակցելուն դեմ ենք եղել»,-ասաց Ստամբուլյանը՝ հավելելով, որ «Վերածնվող Հայաստան»-ում այս առումով համընդհանուր կոնսենսուս է եղել:

ԱԺ նախկին պատգամավորը վստահեցրեց, որ թեեւ հեռացել են խորհրդարանից, բայց համագործակցությունը «Հայաստան» դաշինքի եւ մյուս բոլոր առողջ ուժերի հետ շարունակվելու է. «Մենք նույն գաղափարներն ու մոտեցումներն ունենք, դրանցում ոչինչ չի փոխվել: Մեր բոլոր թիմակիցները, առհասարակ, Հայաստանի համար անհանգստացող մարդիկ, կարծում են, որ մեր ժողովրդի փրկությունն այս իշխանությունների՝ մեկ օր շուտ հեռացմամբ է պայմանավորված. այս առումով որեւէ տարաձայնություն չկա»,-ասաց նա:

Մեր զրուցակիցը նաեւ նշեց, որ «Վերածնվող Հայաստան»-ը շարունակելու է իր գործունեությունը խորհրդարանից դուրս որպես ընդդիմադիր ուժ. «Մանդատով, թե առանց մանդատ, մեր մոտեցումները չեն փոխվում»,-հավելեց նա:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ գրել էր, որ Վահե Հակոբյանի ու թիմակիցների խորհրդարանական գործունեությունը դադարեցնելը կոնկրետ նպատակներ ունի. «Չի բացառվում՝ իշխանության հետ համագործակցության արդյունք է մանդատներից հրաժարվելը, այսինքն՝ Վահե Հակոբյանն ունեցվածքը փրկելու ու կալանավորվելու վտանգից ազատվելու համար համաձայնության է եկել Փաշինյանի իշխանության հետ, որ լռելյայն հեռանալու է ԱԺ-ից: Իսկ այն, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը Վահե Հակոբյանի նկատմամբ ունի տարբերակված մոտեցում, ակնհայտ է»:

Հարցին՝ արդյոք իրենց այս որոշումը իշխանությունների հետ համագործակցության արդյունք է, կամ որեւէ կաշկանդվածություն ունեցել են որոշում կայացնելիս, Ստամբուլյանն արձագանքեց. «Նոնսենս է, իշխանությունների հետ համագործակցությունը բացառված է: Մենք վախենալու կամ մտահոգվելու բան չունենք, ինչպես իրենք էին ասում, թե մանդատներից ենք կառչած. հիմա մանդատից ոչ ոք կառչած չի, ոչ էլ անձեռնմխելի ենք»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց նա:

Ն.Հ.

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄՈԴԵԼՆԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանն ընդունել է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) ներկայացուցիչներին:

Ողջունելով հյուրերին՝ նախարարի տեղակալն ընդգծել է, որ ԱԶԲ-ի հետ համագործակցությունը ՀՀ-ում կրթության բարեփոխումների աջակցության շարունակականության ապահովման առումով կարեւոր նշանակություն ունի:

Կարեն Թռչունյանը տեղեկացրել է, որ Ազգային ժողովն ընդունել է «Կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը», որտեղ ամրագրված թիրախային նպատակների իրագործման համար նախատեսվում է մշակել եւ հաստատել մինչեւ 2026 թվականի գործողությունների պլանը: Նախնական եւ միջին մասնագիտական ոլորտում շրջանառության մեջ է դրվել նոր օրենքի նախագիծը, որում ամրագրվել են աշխատանքի վրա հիմնված ուսուցման մասին դրույթները: Նշված ծրագրերում շեշտադրված է կրթություն-գիտություն-աշխատաշուկա կապի ամրապնդման անհրաժեշտությունը, որը ենթադրում է մասնավոր հատվածի հետ համագործակցություն:

Այս համատեքստում քննարկվել են պետություն-մասնավոր հատված համագործակցության արդյունավետ մոդելների նախագծման գործում ԱԶԲ աջակցության հնարավորությունները:

«Մենք գնահատում ենք ձեր մոտեցումները եւ պատրաստ ենք լավագույն փորձի կիրառմամբ եւ համագործակցությամբ նախագծել պետություն-մասնավոր հատված ճանապարհային քարտեզ՝ շոշափելի արդյունքներ գրանցելու հստակ նպատակադրմամբ»,- ասել է նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը:

Քննարկման ընթացքում նշվել է, որ պետություն-մասնավոր հատված համագործակցության ճանապարհային քարտեզը ենթադրում է ենթակառուցվածքների զարգացման եւ կառավարման, ծառայությունների մատուցման առաջխաղացում, որին միտված են նաեւ կրթության ոլորտի ռազմավարական ծրագրերը:

Կողմերն անդրադարձել են նաեւ համագործակցության ընթացիկ եւ նախատեսվող ծրագրերին առնչվող մի շարք աշխատանքային հարցերի:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 11-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՄԱՐԶ

ԱՆՑԿԱՑՐԵԼ Է ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզպետարանից հայտնում են, որ նոյեմբերի 25-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը խորհրդակցություն է անցկացրել մարզի համայնքների ղեկավարների մասնակցությամբ, որին մասնակցել են նաեւ մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանը, մարզպետարանի գլխավոր քարտուղար Արման Գեւորգյանը, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարները: Քննարկվել է նոյեմբերի 24-ի դրությամբ մարզի համայնքների 2022 թ.-ի տեղական բյուջեների սեփական եկամուտների կատարողականների հարցը: Մարզպետ Ղալումյանը համայնքների ղեկավարներին առաջարկել է մինչեւ տարեվերջ հարյուր տոկոսով ապահովել 2022 թ.-ի տեղական բյուջեով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրումը: Հունվարին պարզ կլինի, թե մարզպետի այդ առաջարկ-հորդորը որքանով է իրականացել:

ՍԽԱԼ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔՈՒՄ

Տավուշի մարզպետարանի ինտերնետային պաշտոնական կայքում տեղեկատվություն է զետեղված Տավուշի մարզի 4 խոշոր համայնքների եւ նրանց ղեկավարների մասին: Այդ կայքում որպես Բերդ խոշորացված համայքի ղեկավար ներկայացված է 2012թ.-ից Բերդ համայնքը ղեկավարած, 2016-ին այդ պաշտոնում վերընտրված, 2017թ.-ին Բերդ խոշորացված համայնքի ղեկավար ընտրված Հարություն Մանուչարյանը: Վերջինիս դեմ հարուցված քրեական գործի շրջանակներում նա 2021թ. նոյեմբերի 9-ից անազատության մեջ էր, 2022թ. հոկտեմբերի 7-ին ազատ արձակվեց, սակայն նոյեմբերի 10-ին իր դեմ հարուցված այլ քրեական գործի շրջանակներում նորից կալանավորվեց: Հ. Մանուչարյանի գլխավորած «Ջորավոր համայնք» դաշինքը հաղթել է 2022թ. սեպտեմբերի 25-ին կայացած Բերդ համայնքի ավագանու համամասնական կարգով ընտրություններում, սակայն դրանից հետո այդ դաշինքի ավագանու թեկնածուների ցանկի առաջին համար Հ. Մանուչարյանը եւ 2-րդ համար Սամվել Հովսեփյանը ավագանու անդամությունից հրաժարական են տվել: Նոյեմբերի 10-ին համայնքի նորընտիր ավագանին Բերդ համայնքի ղեկավար է ընտրել «Ջորավոր համայնք» դաշինքի ավագանիների թեկնածուների ցանկի 3-րդ համար Աստղիկ Հակոբյանին, նոյեմբերի 13-ին կայացել է նրա երդման եւ պաշտոնի ստանձնման հանդիսավոր արարողությունը: Ա. Հակոբյանի՝ համայնքի ղեկավար ընտրվելուց 20 օր է անցել, սակայն Տավուշի մարզպետարանի կայքում որպես Բերդ համայնքի ղեկավար նշված է Հ. Մանուչարյանը: Այդ կայքում Բերդ համայնքի ավագանու 21 անդամներից նշված են միայն 13-ի անուն-ազգանունները: Նորընտիր ավագանու անդամներից Սարգիս Մարգարյանը Հ. Մանուչարյանի եւ Ս. Հովսեփյանի հետ ավագանու թեկնածությունից հրաժարական է տվել, սակայն նրա՝որպես ավագանու անդամի անունը նշված է մարզպետարանի ինտերնետային կայքում վերոհիշյալ 13-ի թվում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՅՄԱՆՆԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԸ ԿՓՈԽՀԱՏՈՒՑՎԻ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների սովորողներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգի նախագիծը: Առաջարկվում է վերախմբագրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի «Հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժներին եւ դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը հաստատելու մասին» N 47-Ն հրամանը՝ համապատասխանաբար փոխելով նաեւ անվանումը:



ԿԳՄՍ նախարարությունից ArmLur.am-ին հայտնում են որ հրամանում փոփոխություն կատարելը պայմանավորված է կրթության կառավարման տեղեկատվական համակարգում տրանսպորտային ծառայությունների համար փոխհատուցում ստացող սովորողների մասին տեղեկատվության թվայնացմամբ. այդ նպատակով նոր կարգավորումներ են նախատեսվելու:

Ըստ նախագծի հիմնավորման՝ մանկավարժական աշխատողների տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման վերաբերյալ գործող կարգավորումները հրամանից հանելու անհրաժեշտությունը բխում է «ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ համապատասխան մասնագետ գործուղելու կարգը սահմանելու մասին» N 40-Ն հրամանի կարգավորումներից, որով սահմանված է մանկավարժների համար տրանսպորտային ծառայությունների փոխհատուցում: Առաջարկվող փոփոխությամբ հրամանում առկա կարգավորումները պարզեցվել եւ հստակեցվել են, որի արդյունքում վերախմբագրված հրամանով կկարգավորվեն միայն սովորողների տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ կրթության կառավարման տեղեկատվական համակարգում տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցում ստացող անձանց մասին տեղեկատվությունը կթվայնացվի՝ հնարավորինս զերծ մնալով անճշտություններից: Սովորողներին առաջարկվող փոխհատուցումները.

կփոխհատուցվի սովորողների տրանսպորտային ծառայությունների ծախսը՝ անկախ հեռավորությունից, եթե աշակերտը, իր փաստացի բնակության վայրում ուսումնական հաստատության բացակայությամբ պայմանավորված կամ առկա հաստատությունում տվյալ կրթական ծրագրի բացակայությամբ պայմանավորված, ուսումը ստանում է այլ բնակավայրի կրթական հաստատությունում: Ամսական փոխհատուցման առավելագույն չափը յուրաքանչյուր սովորողի համար չի կարող գերազանցել 20 հազար 200 ՀՀ դրամը: Ուսումնական հաստատությունը մինչեւ յուրաքանչյուր տարվա հունվարի 20-ը կրթության կառավարման տեղեկատվական համակարգում մուտքագրում է տվյալ տարվա ընթացքում համապատասխան փոխհատուցում ստացող անձանց մասին տեղեկատվություն, իսկ մինչեւ սեպտեմբերի 20-ը՝ տվյալ տարվա ընթացքում փոխհատուցում ստացող անձանց մասին ճշտված տեղեկատվություն: Միկրոավտոբուսային եւ ավտոբուսային երթուղի լինելու դեպքում փոխհատուցման գումարը տրվում է համապատասխան երթուղիների համար սահմանված սակագների չափով, միկրոավտոբուսային եւ ավտոբուսային երթուղիների բացակայության դեպքում՝ յուրաքանչյուր կմ-ի համար 25 ՀՀ դրամ, բայց ոչ պակաս 200 ՀՀ դրամից:

Եթե բացակայում է միկրոավտոբուսային կամ ավտոբուսային երթուղին, եւ տվյալ բնակավայրից տրանսպորտային փոխհատուցման ծառայություններից օգտվող սովորողների թիվը փոքր է չորսից (այսինքն՝ ենթադրաբար, անգամ համատեղ տաքսուց օգտվելու տարբերակն արդյունավետ չի լինի), ապա տրամադրվող փոխհատուցման չափը կկազմի նվազագույնը 1000 ՀՀ դրամ՝ ներկա ստացած յուրաքանչյուր օրվա համար: Այս գումարը հավասար բաժանվում է բոլոր օգտվողներին: Հաշվարկված գումարների շրջանակում (բացառությամբ կարգի 15-րդ կետով սահմանված դպրոցի շենքի հիմնանորոգմամբ, վերակառուցմամբ կամ նորի կառուցմամբ պայմանավորված այլ բնակավայրում տեղակայված դպրոցում ուսումնական գործընթացը կազմակերպելու դեպքերի) կարող են ձեռք բերվել նաեւ ուղեփոխադրման ծառայություններ՝ պայմանով, որ դրանցից պարտադիր կարգով օգտվեն շահառուները: Քաղաքացիները եւ շահառու խմբերը նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են ներկայացնել մինչեւ դեկտեմբերի 10-ը:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

ՆՈՐ ԳՈՐԾԻՔ՝ AmeriaPhonePOS

«Ամերիաբանկ»-ը գործարկել է անհպում անկանխիկ վճարումների նոր գործիք՝ AmeriaPhonePOS կամ ՀեռաPOS, որը հնարավորություն է տալիս սմարթֆոնը դարձնել POS տերմինալ եւ ստանալ վճարումներ ցանկացած վայրում հարմար, արագ եւ հուսալի եղանակով:

Հավելվածը նախատեսված է իրավաբանական անձանց /ԱՁ հաճախորդների համար՝ ընձեռելով առանց ֆիզիկական POS տերմինալի անկանխիկ վճարումներ ստանալու հնարավորություն:

ՀեռաPOS-ը նոր սերնդի ծրագրային լուծում է, որի միջոցով անկանխիկ գործարքների համար կիրառվում են անվտանգության միջազգային չափանիշներին համապատասխան նոր տեխնոլոգիաներ: Այն նախատեսված է NFC ֆունկցիա ունեցող Android 8.1 եւ ավելի բարձր դասի սմարթֆոնների համար:

AmeriaPhonePOS հավելվածի շնորհիվ բացի վճարում ստանալուց հնարավոր է նաեւ վերահսկել հաշվետվությունները, ինչպես նաեւ վճարային կտրոնն ուղարկել հաճախորդի էլեկտրոնային հասցեին:

Նշենք, որ AmeriaPhonePOS տերմինալները սպասարկում են ինչպես դեբետային, այնպես էլ կրեդիտային «ArCa», «MasterCard», «Visa» եւ «Mir» քարտատեսակները:

Հավելվածն ակտիվացնելու դեպքում գործում է հատուկ առաջարկ՝

անվճար VISA Business քարտ՝ ծառայությունն ակտիվացնող առաջին 100 հաճախորդներին,

անվճար սպասարկում մինչեւ 31/12/2023թ.՝ անկախ AmeriaPhonePOS-ի միջոցով ամսական շրջանառության ծավալից,

անվճար Օնլայնբանկինգ իրավաբանական անձանց/ԱՁ-ներին՝ ծառայության գործողության ամբողջ ժամանակահատվածի համար:

AmeriaPhonePOS հավելվածն ակտիվացնելու համար անհրաժեշտ է այցելել բանկի ցանկացած մասնաճյուղ եւ լրացնել առեւտրային կետի գրանցման հայտպայմանագիրը: Ծառայության ակտիվացումն ու տեխնիկական սպասարկումն անվճար են:

Թեեւ հավելվածը վերջերս է գործարկվել, այն արդեն հասցրել է մեծ հետաքրքրություն առաջացնել հաճախորդների մոտ:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն առաջատար ֆինանսական -տեխնոլոգիական հաստատություն է եւ ՀՀ տնտեսական ոլորտի առավել նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: «Ամերիաբանկ»-ը ներկայանում է նորարար ու թվային միջավայրով՝ էկոհամակարգով, որը մեկտեղում է ֆինանսական եւ ոչ ֆինանսական ծառայությունները եւ հնարավորություն ընձեռում բոլոր հիմնական ուղղություններով ստանալ հարմարավետ եւ հնարավորինս արագ ֆինանսավորում: Հաշվի բացումից մինչեւ քարտի տրամադրման եւ ֆինանսավորման համար դիմելու ամբողջ ուղին այժմ հնարավոր է անցնել էկոհամարգի առցանց միջավայրում:

«Ամերիաբանկ»-ն առաջնորդվում է հաճախորդամետ եւ բիզնեսի պատասխանատու վարման քաղաքականությամբ՝ թվային, ժամանակակից ու անվտանգ միջավայրում ապահովելով սպասարկման բարձր որակ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՌԵԿՈՐԴՆԵՐ

ՈՒԺԱՅԻՆ ԵՌԱՄԱՐՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի ուժային եռամարտի հավաքականը Լեհաստանի Շեդլեց քաղաքում օրերս մասնակցել է XPC վարկածով փաուերլիֆտինգի աշխարհի գավաթի խաղարկությանն ու 16 ոսկե մեդալ նվաճել: Հայաստանի թիմի կազմում ընդգրկված է եղել 18 մարզիկ՝ դասանիներ, երիտասարդներ եւ մեծահասակներ: Մեծահասակների դայֆարում գյումրեցի Արա Խաչատրյանը (90 կգ) աշխարհի ռեկորդով դարձել է գավաթի խաղարկության բացարձակ հաղթող եւ արժանացել ոսկե մեդալի, դասանիների դայֆարում էլ գավաթի խաղարկության բացարձակ հաղթող է ճանաչվել Աշոտ Պետրոսյանը (90 կգ):

Մեծահասակների պայքարում գավաթի խաղարկության հաղթող են դարձել եւ Եվրոպայի ռեկորդ սահմանել Գեւորգ Ալեքսանյանը (100 կգ), Հայկ Աֆյանը (100 կգ) եւ Մակար Թամրազյանը (67,5 կգ): Պատանիների պայքարում ոսկե մեդալին արժանացել են Արմեն Նիկողոսյանը (56 կգ) եւ Մելսիկ Մարտիրոսյանը (60 կգ), որոնք նաեւ Եվրոպայի ռեկորդ են սահմանել: Իրենց քաշային կարգերում հաղթող են ճանաչվել նաեւ Էդգար Բաղալյանը (60 կգ), Նարեկ Թամրազյանը (67,5 կգ), Կամո Եղոյանը (75 կգ), Արտյոմ Սոլոյանը (90 կգ), Գոռ Հովհաննիսյանը (100 կգ), Կարեն Պետրոսյանը (110 կգ), Արտավազդ Առաքելյանը (125 կգ), Արամ Մարգարյանը (125 կգ): Կանանց հաշվարկում աշխարհի քառակի չեմպիոն է դարձել ոստիկանության մայոր Ժաննա Շահնազարյանը: Թիմային հաշվարկում Հայաստանի հավաքականն առաջին տեղն է զբաղեցրել:

Հայ մարզիկները մրցավայր են մեկնել Հայաստանի ուժային եռամարտի ֆեդերացիայի նախագահ եւ հավաքականի գլխավոր մարզիչ Գագիկ Սարոյանի գլխավորությամբ: Աշխարհի գավաթի խաղարկությանը 15 երկրի շուրջ 600 մարզիկ է մասնակցել ինչպես ուժային եռամարտ, այնպես էլ սեղմում-պառկած վարժությունից: Հայաստանի ուժային եռամարտի ֆեդերացիայի նախագահ Գագիկ Սարոյանի խոսքով՝ տարվա ընթացքում սա թիմի վերջին միջազգային մրցաշարն էր: Դեկտեմբերի 17-18-ին էլ Ոսկեհատի նոր վերանորոգված մարզադահլիճում կանցկացվի ուժային եռամարտի Հայաստանի առաջնությունը:

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ԼՈՒԾԱՐԵԼ

Հայտնի կինոռեժիսոր Միհեր Մկրտչյանն այսօր հայտարարել է, որ Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը պատրաստվում է կրճատել իր՝ «Միհեր Մկրտչյան» թատրոնի գեղարվեստական ղեկավարի հաստիքը:

«Վերջապես լավ նորություն հայ թատերական աշխարհի համար. սուրճ խմեցի, բաժակ նայողն ասաց, որ Ավինյանը պատրաստվում է մոտակա ժամանակ լուծարի «Միհեր Մկրտչյան» թատրոնի գեղարվեստական ղեկավարի հաստիքը, այսինքն՝ ինձ: Բաժակ նայողն ասաց, որ չեն մարսել «Իշխանություն-2» ֆիլմը: Բաժակ նայողը ասաց նաեւ, որ քաղաքապետարանը օգտագործելու է պրիմիտիվ երկքայլանի կոմբինացիա:

Իհարկե, իմ կողմից վայնասուն չի լինելու. 50-ն անց մարդ եմ՝ կյանքում ինչ-որ բան արած:

ՀԳ. Գեղարվեստական ֆիլմ նայելուց առաջ մարսողական խմե՛ք»,- հայտնել է նա:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ Միհեր Մկրտչյանի «Իշխանություն-2» ֆիլմը մեծ աժիոտաժ է առաջացրել իշխանական գործիչների շրջանում:

Ի դեպ, «Իշխանություն-2» ֆիլմի պրեմիերայից մեկ օր անց մեծ աժիոտաժ սկսվեց հանրության շրջանում, անգամ մի քանի քաղաքացիներ փորձեցին բողոքի ակցիա իրականացրել՝ ընդդեմ ֆիլմի:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԽՈՇՈՐ ԿՈԼԵԿՏԻՎ ՀԱՅՑ

Google-ին հերթական անգամ մեղադրում են իր Play Market հավելվածների խանութի հետ կապված հակամրցակցային պրակտիկայի մեջ: Այս խանութի շրջանակում տեղի ունեցող գործարքների մեծ մասից գանձվում է չափազանց մեծ՝ 30% միջնորդավճար: ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի հյուսիսային օկրուգի դաշնային դատավոր Ջեյմս Դոնատոն վարույթ է ընդունել կոլեկտիվ հայցը, որը կարող է վերաբերել Play Market-ի ավելի քան 21 միլիոն օգտատերերի:

Ինչպես տեղեկացնում է The Register-ը՝ նոր հակամենաշնորհային գործը վերաբերում է ԱՄՆ 12 նահանգներից Play Market-ի օգտատերերին, որոնք 2016 թ. օգոստոսից ի վեր հավելվածներ են գնել հարթակից կամ հավելվածի ներսում գնումներ են արել:

Սպառողները դժգոհում են, որ Google-ը պահպանում է իր մենաշնորհային դիրքը Android հավելվածների ոլորտում, ինչը ընկերությանը հնարավորություն է տալիս բարձրացնել հավելվածների գները՝ դրանց վաճառքից ստանալով 30% միջնորդավճար: Արդյունքում հավելյալ ծախսերի բեռը դրվում է օգտատերերի ուսերին (ոչ թե հավելվածները մշակողների կամ դրանց հեղինակների), որոնք ստիպված են ավելի շատ վճարել հավելվածների համար՝ Google-ի համար եկամուտներ ապահովելով:

Դաշնային դատավոր Ջեյմս Դոնատոն իր որոշմամբ (PDF) դատավարությանը տվել է կոլեկտիվ հայցի կարգավիճակ, եւ այժմ տուժածների թիվը, որոնց Google-ը հնարավոր է՝ ստիպված լինի փոխհատուցում վճարել, կարող է հասնել 21 միլիոնի:

Ինչպես տեղեկացնում Reuters-ը, այս կոլեկտիվ հայցով դատավարությունը կսկսվի հաջորդ տարվա հունիսին:

Թեեւ հաշվի առնելով, որ Google-ի սեփականատեր Alphabet ընկերությունը նախորդ եռամսյակում ավելի քան 16 միլիարդ դոլար է վաստակել, նման տուգանքները կարելի է համարել բիզնես ծախսեր:

ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ԳՆԵԼ

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդը» ցանկանում է ձեռք բերել Իսպանիայի հավաքականի հիմնական դարպասապահ, Բիլբաոյի «Աթլետիկի» խաղացող Ունայ Սիմոնին:

25-ամյա ֆուտբոլիստի պայմանագիրը «Աթլետիկի» հետ նախատեսված է մինչեւ 2025թ. հունիս: Բիլբաոյի ակումբը տրանսֆերից ակնկալում է 30-40 միլիոն եվրո:

Ունայ Սիմոնը Լուիս Էնրիկեի գլխավորած թիմի կազմում մասնակցել է աշխարհի առաջնության խմբային փուլի առաջին երկու հանդիպումներին: Իսպանիան 7:0 հաշվով հաղթել է Կոստա Ռիկային, 1:1 հաշվով ոչ-ոքի խաղացել գերմանացիների հետ:

● *Դեկտեմբերի 1-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Կուլիսներում կամ թատրոնի անատոմիա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ֆիզիկական անձը փոստային առաքմամբ ներմուծել է ապրանքներ, որոնց մաքսային արժեքը կազմել է 250000 դրամ: Ի՞նչ չափով մաքսային վճարներ պետք է անձը վճարի:

Կոմիտաս Ղուկասյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Միության անդամ չհանդիսացող պետությունից ֆիզիկական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների համար վճարվում են միասնական մաքսային վճարներ (բացառությամբ մաքսավճարի) 22.5 տոկոս, եթե մեկ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 30 կիլոգրամը, իսկ մաքսային արժեքը գերազանցում է 200 հազար դրամը, սակայն չի գերազանցում 1000 եվրոյին համարժեք ՀՀ դրամը: Ընդ որում՝ սահմանված միասնական դրույքաչափերով մաքսային վճարները հաշվարկվում են ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի եւ սույն մասի 1-ին կետով սահմանված մաքսային արժեքի (200 հազար դրամ) դրական տարբերության նկատմամբ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Միության մաքսային սահմանով ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրին համապատասխան, եւ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 183-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային հայտարարագիր ներկայացնելուն զուգահեռ մաքսային մարմին են ներկայացվում փաստաթղթեր, որոնց հիման վրա լրացվել է մաքսային հայտարարագիրը, այդ թվում՝ ապրանքների հայտագրված մաքսային արժեքը եւ ապրանքների մաքսային արժեքի սահմանման ընտրված մեթոդը հաստատող փաստաթղթերը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ արտոնություններ ունեն Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամություն ունեցող անձինք:

Հասմիկ Մուրադյան (69 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Բնակարանային վարձի, աղբահանության, հեռախոսի վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու, պետպատվերի շրջանակում բուժօգնություն ստանալու /այդ թվում՝ դեղորայք/, պրոթեզաօրթոպեդիկ եւ վերականգնողական պարագաներ անվճար ստանալու, ԱՊՀ երկրների տարածքում տարին մեկ անգամ արտոնյալ պայմաններով երթեւեկելու:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայրենական մեծ պատերազմի վետերանների համար սահմանված արտոնություններից կարող են օգտվել այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցները եւ նախկին խորհրդային բանակում զինվորական պարտականությունները կատարելիս հաշմանդամություն ձեռք բերած անձինք:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Իսպանիայում անցկացված բռնցքամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունում Էրիկ Իսրայելյանը տպավորիչ հաղթանակով նվաճեց չեմպիոնի տիտղոսը: 60 կգ քաշայինների եզրափակիչում 5:0 հաշվով հաղթեց Վրաստանի ներկայացուցիչ Գոչա Գորդուլավային: «Ինձ համար շատ կարեւոր էր այս չեմպիոնությունը: Իրականացրեցի մանկությանս երազանքը: Ինձ շատ պետք էր այս չեմպիոնությունը, շատ ապացուցելու բան կար բոլորին: Հաղթանակս նվիրում եմ պատերազմում զոհված զինվորների մայրերին»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.11.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: